ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

N372
01 սեպտեմբերի 2021թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ.Մաթևոսյանին

Մեծարգո պարոն Մաթևոսյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 26-ի <<Համայնքի 2021 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին>> թիվ 111 որոշումը:

Առդիր 50 /հիսուն/ թերթ:

Համայնքի ղեկավար **Լ. Գրիգորյան**

Կատ.՝ Ա.Սաֆարյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 4-18153-2021
01 09 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2021 թվականի N111

ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N42-Ն որոշման 2-րդ կետը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N42-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումը՝

1) 04 բաժնի 5-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածով նախատեսված գումարից պակասեցնել 1 500 000 ՀՀ դրամ և այն ուղղել հետևյալ հոդվածներին՝

1.1) 500 000 ՀՀ դրամն ուղղել 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5113 հոդվածին.

1.2) 1 000 000 ՀՀ դրամն ուղղել 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5122 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի օգոստոսի 26

հ. Մերձավան